

Պետական ռեեստրի հիմնման նպատակով ստեղծվում է մասնագետների հաշվառման հարթակ

Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի տարբեր ոլորտներում ակտիվ մասնակցության խթանման, նրանց լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ միջավայրային գործոնների բացահայտման և նպատակային ծառայությունների ներդրման նպատակով ՀՀ կառավարությունն՝ ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, նախաձեռնել է հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված հիմնարար քայլեր:

Ներդրվող նոր համակարգը կառուցվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքներով և մոտեցումներով՝ հիմքում ունենալով 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների բազմամասնագիտական թիմի կազմն ապահովելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորվում է մասնագետների **պետական ռեեստր**: Պետական ռեեստրը բաղկացած է երկու բաժնից, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվում են հետևյալ մասնագետները՝

1. օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող մասնագետներ,

2. անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ:

Պետական ռեեստրում ընդգրկվելու և գնահատման հանձնաժողովներում աշխատելու հետաքրքրվածություն ունեցող բոլոր մասնագետները կարող են գրանցվել այդ նպատակով ստեղծված մասնագետների հաշվառման հարթակում:

Մասնագետների դիմումների հաշվառման հարթակում գրանցման համար անհրաժեշտ է մուտք գործել հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3c3t60s> և գրանցել անհրաժեշտ տվյալները, իսկ գրանցման մասին պատմող տեսանյութը դիտել հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3PEZleK>:

Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող մասնագետներ		Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ
18 տարեկանից բարձր	մինչև 18 տարեկան	

1. Օրթոպեդ	1. Մանկաբույժ	1. Հոգեբան
2. Վնասվածքաբան	2. Մանկական օրթոպեդ-վնասվածքաբան	2. Կինեզոլոգ
3. Ակնաբույժ	3. Մանկական ակնաբույժ	3. Էրգոթերապիստ
4. Սրտաբան	4. Մանկական սրտաբան	4. Լոգոպեդ
5. Քիթ-կոկորդ-ականջաբան	5. Մանկական նյարդաբան	5. Տիֆլոմանկավարժ
6. Նյարդավիրաբույժ	6. Մանկական քիթ- կոկորդ-ականջաբան	6. Սուրդոմանկավարժ
7. Հոգեբույժ	7. Մանկական նյարդավիրաբույժ	7. Օլիգոֆրենոմանկավարժ
8. Էնդոկրինոլոգ	8. Մանկական հոգեբույժ	8. Սոցիալական մանկավարժ
9. Վիրաբույժ	9. Մանկական ներզատաբան	9. Մանկական հոգեբան
10. Նյարդաբան	10. Մանկական վիրաբույժ	10. Հատուկ մանկավարժ
11. Թերապևտ		
12. Արյունաբան		
13. Գաստրոէնտերոլոգ		
14. Նեֆրոլոգ/երիկամաբան		
15. Ուռուցքաբան		
16. Մաշկաբան		
17. Ռևմատոլոգ		
18. Ուռուլոգ		
19. Թոքաբան		
20. Վերականգնողաբան	11. Մանկական վերականգնողաբան	

Հարցերի դեպքում կոնտակտային հեռախոսահամարներ՝ 010 52-17-61, 010 56-43-80, 060 65-28-21: